

## ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԷՊՈՍՈՒՄ

### *Ռոբերտ Ղազարյան Հասմիկ Հմայակյան*

Հայ մարդու բարոյական կերպարի ուրվապատկերմանը մեծապես կարող է նպաստել հայ պատմագրության ընձեռած, մասնավորապես՝ հայ պատմիչներ Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի, Հովհաննես Երզնկացու և այլոց աշխատություններում եղած նյութը: Հայ մարդու բարոյական նկարագիրն իր խտացումն է գտել նաև նույն հայ պատմիչների (հատկապես Խորենացու) մոտ պահպանված առասպելներում և, իհարկե, էպոսում, որտեղ այդ նկարագրերը բյուրեղացված են հանձինս էպոսի չորս ճյուղերի հերոսների և, մասնավորապես, երրորդ ճյուղի գլխավոր հերոս Սասունցի Դավթի:

Քերթողահայր Մովսես Խորենացին խոսքն անմիջականորեն ուղղում է իր ժամանակակիցներին և կոչ անում հետևել քաջ նախնիների օրինակին: Հայրենասիրությունը և հայրենիքի անկախության համար անձնագոհությունը ամենաբարձր առաքինություններն են, որ պետք է ունենան Հայաստանի ոչ միայն երևելի այրերը, այլև ողջ ժողովուրդը:

Ահա թե ինչպես է նկարագրում Պատմահայրը Երվանդյան Տիգրանին. «Այս և այսպիսի ուրիշ բաներ բերեց մեր աշխարհին այս խարտյաշ և մազերի ծայրը գանգուր Երվանդյան Տիգրանը, գունեղ երեսով, քաղցր նայվածքով, ուժեղ սրունքներով, գեղեցիկ ոտներով, վայելչակազմ և թիկնավետ, կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ, ուրախությունների մեջ օրինավոր. որի մասին մեր հները, որոնք փանդիռներով երգում էին, ասում էին, թե մարմնի ցանկությունների մեջ էլ չափավոր է եղել, մեծիմաստ և պերճախոս և լի բոլոր հատկություններով, որ պիտանի են մարդուն: Եվ այս գրքում ինչ կա ինձ ավելի սիրելի, քան սրա մասին եղած գովեստներն ու պատմությունը երկարել: Նա ամեն բանի մեջ արդարադատ և հավասարա-

սեր կշեռք ունենալով՝ ամեն մեկի կյանքը կշռում էր իր մտքի լծակով. չէր նախանձում լավագույններին, չէր արհամարհում նվաստներին, այլ աշխատում էր ընդհանրապես ամենքի վրա տարածել իր խնամքի զգեստը»<sup>1</sup>:

Մովսես Խորենացու մոտ են պահպանվել նաև Հայկի և Բելի, ինչպես նաև Արա Գեղեցիկի և Շամիրամի մասին առասպելները: Առաջին առասպելի հերոսը՝ Հայկը, մի վայելչակազմ և վայելչագեղ դյուցազն է՝ հաստ բազուկներով, վառվռուն աչքերով: Նա քաջ էր և երևելի հսկաների մեջ, դիմադրում էր բոլորին, ուվքեր փորձում էին տիրապետել հսկաներին և դյուցազուններին: Նա ըմբոստանում է Բելի բռնապետության դեմ և հեռանալով՝ բնակություն հաստատում մի դաշտավայրում, որտեղ հիմնում է Հայկաշեն բնակավայրը: Բելը գորքով արշավում է նրա դեմ, սակայն ռազմիկներով սակավաթիվ Հայկը չի ընկրկում թշնամու դեմ, իր լայնալիճ աղեղով խոցում է Բելին և փախուստի մատնում նրա համախոհներին: Չնայած այս կերպարի առասպելականությանը, այստեղ ի հայտ են գալիս հայ ժողովրդի բազում գավակներին բնորոշ մի շարք նկարագրեր՝ հայրենասիրություն, անկախության ձգտում, թշնամու դեմ գլուխ չխոնարհելու և պատերազմում անգամ սակավ թվով հաղթանակներ տանելու կարողություն:

Գրեթե նույն հատկանիշներով կարելի է բնութագրել Արա Գեղեցիկին: Չքննարկելով նրա կերպարի դիցաբանական ասպեկտները՝ կանգ առնենք այն հատկությունների վրա, որոնցով ժողովուրդն է օժտել իր հերոսին: Նա արտասովոր գեղեցիկ էր, և նրա գեղեցկության համբավը հասնում է Ասորեստանի թագուհի Շամիրամին, որը պատգամավորներ է ուղարկում՝ մեծամեծ նվերներով ու խոստումներով, խնդրելով գալ Նինվե՝ կամ իրեն կին առնելու և թագավորելու ամենքի վրա, կամ կատարել իր ցանկությունը և մեծամեծ նվերներով խաղաղությամբ հետ դառնալ: Սակայն Արան բազմիցս մերժում է Շամիրամին՝ չցանկանալով դավաճանել ո՛չ հայրենիքին, ո՛չ էլ իր սիրելի կնոջը՝ Նվարդին, որից որդի ուներ: Շամիրամը զայրացած արշավում է Հայաստան՝ Արայի դեմ: Վերջինս հերոսաբար զոհվում է ռազմի դաշտում: Այստեղ ևս ի հայտ են գալիս մի շարք բնութագրեր. հայրենասիրություն, նվիրվածություն ընտանիքին, կնոջը, ինչպես նաև մի կարևոր գիծ ևս՝ փառամոլ և փառատենչ չլինելը, ունեցածը գնահատելը, քանզի Արան մերժում է Շամիրամի մեծամեծ խոստումները և արդյունքում՝ հատուցում սեփական կյանքով:

Վաղ ավատատիրական Հայաստանի արտաքին ու ներքին կյանքում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-պատմական նշանակալի իրադարձությունները հիմք են ծառայել զանազան պատմական ավանդությունների,

<sup>1</sup> Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գիրք առաջին, ԻԴ:

երգերի, զրույցների, որոնք հյուսվում են ժամանակի երկու նշանավոր տոհմերի ներկայացուցիչների՝ հայոց Արշակունի թագավորների և Մամիկոնյան սպարապետների անունների ու արարքների շուրջ՝ սերունդների և դեպքերի հաջորդականության սկզբունքով: Առաջ է գալիս հայկական ժողովրդական երկրորդ վեպը (առաջինը՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանված «Վիպասանք» անունով առասպելաբանական վեպն էր), որի առանցքն էին կազմում Մասանյան Իրանի դեմ Արշակունյաց Հայաստանի մղած դարավոր կռիվները: Ելնելով վեպի բուն թեմատիկայից և Փավստոս Բուզանդի ակնարկներից՝ Մանուկ Աբեղյանն այդ ավանդական հերոսավեպն անվանում է «Պարսից պատերազմ»<sup>1</sup>:

Փավստոս Բուզանդի վեպում տեղ գտած չափազանցումների նպատակն է ցույց տալ հայերի քաջությունն ու հերոսությունը՝ թվով անհամեմատ գերազանց թշնամիների նկատմամբ: Քաջության ու հերոսության գաղափարին է հանգում նաև վիպական հերոսների տիրասիրությունը, իրենց բնիկ տերերին, այսինքն՝ Արշակունի թագավորներին անձնագոհ նվիրվելու և հավատարիմ մնալու գաղափարը, որը դարձյալ գերիշխող է ողջ վեպում: Տիրասիրությունը և տիրադավության դատապարտումը վեպում որքան էլ պայմանավորված է տվյալ ժամանակաշրջանի բարոյախոսությամբ, այդուհանդերձ, հայրենի ինքնուրույն պետականությունը և անկախության նվիրումն են այն գաղափարները, որոնց սրբությամբ հետևում են վիպական հերոսները, մանավանդ Մամիկոնյան սպարապետները, և որոնք բացահայտ քարոզում են իրենց ենթականերին: Երբ Շապուհից խաբված և ցմահ բանտարկության դատապարտված Հայոց Արշակ թագավորն ինքնասպան է լինում, տարիներ անց հայոց զորքի յուրաքանչյուր զինվոր, Մուշեղի զլխավորությամբ պարսիկների դեմ կռվելիս, մահացու հարված հասցնելով թշնամուն, կրկնում է միևնույն բանաձևը. «Առ, քաջ Արշակ» կամ «Արշակ թագավորին մատաղ եղիր»: Մեռած-գնացած թագավորի նկատմամբ հայ զինվորների այս տիրասիրությունը հարուցում է անգամ պարսից Շապուհ թագավորի զարմանքն ու հիացմունքը:

Վիպական հերոսների տիրասիրության գաղափարին է հարում նաև թագավորի անձի անձեռնմխելիության գաղափարը, որի կրողներն են վեպում կենտրոնական հերոսներ Մուշեղն ու Մանուելը: Թագավորի անձի անձեռնմխելիությունը հին և ընդհանրական սովորություն էր, որ սերում էր օծված և աստվածացված միապետի անձի պաշտամունքից: Բայց այդ հնամենի գաղափարը վաղ միջնադարյան այս վեպում ունի բոլորովին այլ հնչերանգ: Այն վիպասանների համար միջոց է ծառայել սիրված հերոսներին կերպավորելու ասպետական առաքինությամբ, շեշտելու նրանց ավանդա-

<sup>1</sup> Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ա, Երևան, 1966, էջ 191-302:

կան հարգանքն ու պատվախնդրությունը թագավորի անձի նկատմամբ, լինի այն հայրենի, թե օտար: Երբ Մուշեղը պատերազմի դաշտում հաղթում է Աղվանից Ուռնայր թագավորին, չի սպանում նրան, այլ հալածելով, նիզակի կոթով զարկում է նրա գլխին և ասում. «Շնորհակալ եղիր, որ թագավոր մարդ ես, գլխիդ թագ ես կրում. ես թագավոր մարդու չեմ սպանի, մինչև անգամ եթե շատ նեղն էլ ընկնեմ»<sup>1</sup>: Եվ թույլ է տալիս Ուռնայրին գնալ իր երկիրը:

Նույն կերպ է վարվում և Մուշեղի եղբայր Մանուելը՝ Մուշեղին սպանող Վարազդատ թագավորի նկատմամբ: Երբ պատերազմի դաշտում Մանուելի զավակները, հալածելով պարտված Վարազդատին, կամենում են սպանել նրան, Մանուելը կանչում է զավակներին. «Է՛ հե՛յ, տիրասպան մի լինեք»<sup>2</sup>:

Վեպում զարգացրած և գեղարվեստորեն մարմնավորված այս բոլոր գաղափարները ծառայում են մեկ ընդհանուր, միասնական նպատակի. մարտնչել ու մեռնել հայրենի երկրի և այդ երկիրն ու նրա անկախությունը մարմնավորող սեփական թագավորի համար և չթողնել «անգամ մի կորուչափ գետին Հայոց երկրից օտարել»: Այդ է պատճառը, որ Մանուել Մամիկոնյանը մահվան մահճում ողբում է իր բնական մահը, ափսոսում, որ պատերազմի դաշտում չի ընկել քաջությամբ, չի մեռել հայրենի երկրի, բնիկ Արշակունի տերերի, կանանց ու զավակների և առհասարակ բովանդակ ժողովրդի համար, այլ մեռնում է վատթար մահով, անկողնում պառկած: Այդպես ափսոսում է և Մուշեղ Մամիկոնյանը, երբ Վարազդատը խնջույքի ժամանակ նենգությամբ սպանում է նրան. «Երանի թե այս մահը ձիու վրա ինձ հասներ», - ասում է նա մեռնելիս<sup>3</sup>:

Հերոսը դարձյալ մահվան համար չէ, որ ցավում է, այլ որ ճակատամարտում չի ընկել քաջությամբ:

Մամիկոնյան սպարապետները գաղափարականացված հերոսներ են, օժտված քաջության, անվեհերության, ասպետական վեհանձնության, ազգային պատվախնդրության, հայրենիքի նկատմամբ անսահման նվիրումի իդեալականացված հատկանիշներով:

Վասակ սպարապետը Պարսկաստանում Արշակ թագավորի հասցեին ուղղված վիրավորանքի համար տեղնուտեղը սպանում է պարսից արքունի ախոռապետին՝ արժանանալով անգամ Շապուհի հիացմունքին: Նույն Վասակը, Արշակի հետ խաբեությամբ գերվելով Շապուհ արքայից, հերոսին վայել խրոխտ պատասխաններ է տալիս պարսից արքայի հարցումներին՝ բնավ չերկյուղելով սպառնացող մահապատժից: Վասակի որդի

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968, V դպրություն, գլուխ Դ:

<sup>2</sup> Նույն տեղում, գլուխ ԼԷ:

<sup>3</sup> Նույն տեղում, գլուխ ԼԵ:

Մուշեղը, կովում գերելով Շապուհի կանանց, չի թողնում դիպչել նրանց պատվին, այլ ասպետական մեծահոգությամբ վերադարձնում է Շապուհին, որը, հիանալով այդ վեհանձնությամբ, Մուշեղի պատկերը սպիտակ ձիու վրա դրվագել է տալիս իր գինու գավաթին և ամեն անգամ խմելիս հիշում Մուշեղին՝ ասելով՝ «Ճերմակաձին գինի արբցե»:

Ազատ և անկախ հայրենիքի վեհ գաղափարը, որի համար անձնագոհ մաքառում են վիպական հերոսները, վեպում գտել է բացառիկ խորհրդանշական գեղարվեստական կերպավորում: Դա պարսից Շապուհի կողմից Հայոց Արշակ թագավորին հայրենի հող ու ջրով փորձելու միջադեպն է, որի իմաստն այն է, որ հայրենի հող ու ջրի վրա մարդ իրեն զգում է ազատ, զորեղ և հպարտ, մինչդեռ օտար հողում նա հլու-հնազանդ ստրուկ է՝ օտարի կամակատար:

Հայ մարդու բարոյական կերպարի որոշ տարբեր կարելի է գտնել նաև վկայաբանությունների մեջ:

Վաղ շրջանի վկայաբանությունների մեջ իր գրական-գեղարվեստական և գաղափարական արժեքով բացառիկ տեղ է գրավում Շուշանիկի վկայաբանությունը<sup>1</sup>: Այն Սանդուխտ կույսի (Սանատրուկ Արշակունու դուստրը) և Հռիփսիմեի վկայաբանություններից հետո երրորդ կին նահատակին նվիրված պատումն է, որի հերոսուհին օժտված է բնավորության ավելի բարդ ու հարուստ գծերով, քան իր նախորդները, և հանդես է բերված ընտանեկան-կենցաղային հանգամանքներում՝ ամուսնացած հայ կնոջ, մոր բարդ ու դրամատիկական հարաբերություններով բնորոշվող իրադրություններում:

Շուշանիկը դուստրն է Վարդան Մամիկոնյանի, ծոռը՝ Սահակ Պարթևի, կինը՝ Գուգարքի Աշուշա բղեշխի որդու՝ Վազգենի: Վերջինս պարսիկներից արտոնություններ ստանալու ակնկալությամբ ուրանում է քրիստոնեական կրոնը, ընդունում զրադաշտականություն, երկրորդ կին է առնում մի պարսկուհու և փորձում այդ հավատին դարձնել կնոջը՝ Շուշանիկին ու իր զավակներին: Շուշանիկը հոգեկան ծանր տառապանքներ է ապրում, առանձնանում, աղոթքներով ապավինում Աստծուն և խզում ամուսնական կապերը Վազգենի հետ: Վերջինս տարբեր միջոցներով՝ համոզմամբ, հորդորով, ծեծով, խոշտանգումով, շղթայակապ բանտարկությամբ, քաղցով ու ծարավով աշխատում է ընկճել Շուշանիկին և հավատափոխ անել, սակայն ապարդյուն: Շուշանիկը համբերությամբ տարիներ շարունակ կրում է բոլոր տանջանքներն ու տառապանքները, հոգով մնում աննկուն, հաստատ իր քրիստոնեական հավատին ու հայրենական ավանդույթներին և այդպես տառապելով էլ մահանում: Նա Հռիփսիմեի և Սանդուխտի նման ոչ թե սուկ վկայուհու տիպար է, այլ, ինչպես իրավաբաններն նկատված է՝ «հայ գաղափարական

<sup>1</sup> «Սովետը Հայկական», Թ, Վենետիկ, 1853, էջ 10, 47, 49-55:

կնոջ միջնադարյան իդեալ»<sup>1</sup>:

Միջնադարյան Հայաստանի ներքին կյանքի, ժողովրդական կենցաղի, սովորույթների և բարոյական չափանիշների մասին տեղեկություններ միջնադարյան սկզբնաղբյուրներում քիչ են պահպանվել: Սակայն այս իմաստով բացառություն են կազմում Հովհաննես Երզնկացու խրատները՝ «Խրատ հասարակաց» վերնագրով երկը: Նրանք իրենց բովանդակությամբ և կիրառական նշանակությամբ ստանում են կանոնական բնույթ: Նրանցում շեշտը դրվում է հիմնական բարոյական համոզման վրա<sup>2</sup>: Հովհաննես Երզնկացու խրատներում (XIII դ. II կես) տեղեկություններ կան ոչ միայն հայ ժողովրդի միջնադարյան պատմության, այլև մշակույթի տարբեր ասպեկտների, այդ թվում՝ կենցաղի, սովորույթների և բարոյական արժեքների վերաբերյալ:

Նա իր խրատներում ուղղակիորեն դնում է ազգապահպանության հարցը՝ առաջ քաշելով ազգային դավանանքի, լեզվի, սովորույթներին ու ծեսերի պահպանման խնդիրը:

Ժողովրդի և նրա մշակույթի պահպանության հարցը Երզնկացին անմիջապես կապում է ազգային լեզվի և հայ պետականության առանձին միավորների պահպանության, ամրապնդման և համախմբման հետ: Նա իշխանության, պետության պահպանման կարևոր նախապայման է համարում ժողովրդի մարտական ոգու ամրապնդումը, ինչպես նաև տերերի կողմից արդար կառավարումը:

Ելնելով այն մտքից, որ Աստված մարդուն ստեղծում է ինքնիշխան, Երզնկացին գտնում է, որ մարդն օժտված է ստեղծագործական նախաձեռնությամբ: Եթե իշխանությունը Աստված է տալիս, ապա այն պահպանելը և հզորացնելը գուտ մարդկային գործ է:

Իշխանները պարտավոր են խորամուխ լինել երկրի ներքին գործերին, որպեսզի ժամանակին կարողանան կանխել չարը և խրախուսել բարին: Նրանք պարտավոր են քաղաքի և քաղաքացիների նկատմամբ առաջնորդվել եղած օրենքներով: Եվ որքան հզոր է իշխանը, որքան մեծ է նրա ենթակաների թիվը, այնքան նա պարտավոր է շրջահայաց լինել և այդ ամենն ամրագրել օրենքներով:

Երզնկացին խրատներ է տալիս հայ թագավորներին և իշխաններին արտաքին քաղաքականության վերաբերյալ: Նրանք պետք է լինեին դիվանագետ և շրջահայաց: Թագավորի և իշխանի իսկական փառքը, ըստ Երզնկացու, ոչ թե նրա արտաքին շուքի և փայլի մեջ է, այլ՝ թե որքանով է նա կարողանում իր ժողովրդին պաշտպանել և ազատագրել օտար նվաճողներից:

<sup>1</sup> Ավդալբեգյան Մ., Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Երևան, 1971, էջ 158:

<sup>2</sup> Բաղդասարյան Է., Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977, էջ 47:

Հայրենիքի պաշտպանության և ժողովրդի փրկության համար, ըստ Երզնկացու, պետք է հոգան ոչ միայն թագավորն ու իշխանը, այլև բոլորը: Յուրաքանչյուր անհատ պետք է գիտակցի այդ և անհրաժեշտության դեպքում դիմի ծանր զոհաբերությունների:

Պետության և իշխանության կառավարման մասին խրատներում Երզնկացին պահանջում է հնազանդություն իշխանին և թագավորին, սակայն նշում է, որ հնազանդությունը չպետք է դառնա ստորացուցիչ, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը վիրավորող, որովհետև մարդը ստեղծված է ոչ միայն բանական, այլև «ազատական» մտքով:

Իշխաններին տված խրատներում նա ասում է, որ վերջիններս ոչնչով ավելի չեն իրենց ենթականերից, որովհետև նրանք տեր են ոչ թե անբան կամ ստորադաս էակների, այլ իրենց հավասարների, քանզի բոլոր մարդիկ հավասար են ծնվում՝ նույն նյութից:

Երզնկացու խրատների հիմնական նպատակներից մեկը ժողովրդի, նրա անհատների դաստիարակության խնդիրն է՝ ժամանակի ոգուն և բարոյականությանը համապատասխան:

Նա գտնում է, որ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել վաղ հասակից: Երզնկացին երեխայի դաստիարակության հիմքում դնում է համոզելը, բացատրելն ու հասկացնելը, բացառում է բռնության միջոցները ծնողների կողմից:

Մարդու դաստիարակության հիմքում դնելով կրթությունը՝ Երզնկացին պայքարում է միանման կրթության դեմ, նա գտնում է, որ երիտասարդի համար պետք է ընտրել իր խառնվածքին, նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան զբաղմունք:

Երզնկացին կրթությունը և դաստիարակությունը համարում է ժողովրդական բարքերի մաքրման, տգեղ երևույթների վերացման և մարդկային ճիշտ հարաբերությունների հաստատման կարևոր պայման: Ըստ Երզնկացու՝ իշխանավորները, տերերը պետք է հոգ տանեն իրենց ենթակաների և ծառաների հոգևոր պահանջների նկատմամբ և կրթության տան նրանց՝ հաշվի առնելով վերջիններիս ընդունակությունները:

Նա գիտության և լուսավորության տարածումը դիտում է որպես երկրի աշխարհիկ և հոգևոր տերերի ամենամեծ առաքինություններից մեկը: Նա օրինակ է բերում այն ժողովուրդներին, որոնք սեփական պետության կողմից հովանավորվող դպրոցներ ունեն:

Եվ այս խորհուրդների վերջում Երզնկացին թե՛ տերերից, թե՛ ողջ հասարակությունից պահանջում է հոգ տանել գիտության ուսումնասիրությանը և մանկավարժությամբ զբաղվող մարդկանց նկատմամբ:

Նա գտնում է, որ մարդուն պետք է գնահատել իր սեփական արժա-

նիքներով և ոչ թե նրա ծագմամբ:

XIII դարում, հայ ժողովրդի համար այդ ծանր ժամանակաշրջանում, չափազանց կարևորվում է ամուր ընտանիքի խնդիրը: Միայն ամենակայուն բարոյական ընտանիքը կարող էր դիմակայել այն բազում փորձություններին, որ բերում էին մի կողմից՝ մահմեդական միջավայրը, մյուս կողմից՝ զարգացող քաղաքները: Բարոյական ընտանիքի համար նա կարևորում է կամավոր և փոխադարձ սիրո վրա հիմնված ամուսնությունը՝ արգելելով բռնի ամուսնությունը: Նա ընդվզում է անչափահաս ամուսնությունների դեմ: Տղայի համար ընդունելի տարիք համարվում էր 15-ը, իսկ աղջկա համար՝ 14-ը: Երգնկացին դեմ էր մերձավոր ազգականների միջև ամուսնությանը:

Հասարակության բարոյական ամենաձանր ախտերից մեկը նա համարում է գողությունը, որը տարածված էր ոչ միայն հասարակ ժողովրդի, այլև ավատատերերի շրջանում: Գողությունը հասարակական չարիք է, դրա դեմ պետք է պայքարի ամբողջ հասարակությունը: Նա քննադատում է նաև երդմնազանցությունը, սուտ վկայությունը, հայհոյելը:

Առաքինությունների շարքում առաջնայինը նա համարում է սերը, երկնային սերն առ Աստված: Իսկ երկրային առաջին և ամենամեծ սերը նա համարում է ծնողի հանդեպ տածած զգացմունքները և պարտավորությունները: Հանուն ընկերոջ ու եղբոր մարդը նույնպես պետք է ընդունակ լինի մեծ անձնագոհությունների:

Հայ ժողովրդի բարոյական հատկանիշների խտացումներն են «Մասնա ծոեր» ժողովրդական էպոսի գլխավոր հերոսները, որոնք օժտված են բարոյական վեհ հատկանիշներով: Հատկապես այդ իդեալների խտացումն է էպոսի երրորդ ճյուղի գլխավոր հերոս Մասունցի Դավիթը, որը ժողովրդի ամենասիրելի և ամենահոգեհարազատ կերպարն է: Մենք հիմնականում կանգ կառնենք այս կերպարի վրա: Մասունցի Դավթի ամենաբնորոշ հատկանիշներից են ասպետականությունը և համարձակությունը. թշնամու բանակի առջև նա որոտանման ձայնով ազդարարում է, որ թշնամին արթնանա, ձի հեծնի, պատրաստվի կռվելու իր հետ:

Սա նման չէ այն մարտակոչերին, որոնցով Իլիոնի պատերի տակ և բարձր պարիսպների վրա աշխատում են իրար բորբոքել հելլեններն ու տրոյացիները: Սա նման չէ այն լեզվակովին, որով միախառնվում է Մանասարը կտրիճների հետ գոտեմարտելիս: Ոչ էլ թշնամուն գրգռող այն խոսքերին է նման, որոնք հաճախ գոտեմարտի նախաբանն էին համարվում, ինչպես դա հայտնի է տարբեր ժողովուրդների մտո: Դավիթը կարիք չի զգում թշնամուն ծաղրելու, քանի որ նրան կռվի ընթացքը չէ, որ հրապուրում է,

նա ոչ թե փառքի համար է ուզում հաղթել, այլ հայրենիքի բարօրության<sup>1</sup>:

Դավիթը կովի մեջ անգուսպ է, ամբողջովին կիրք ու կորով, սակայն կատաղության ամենախելահեղ պահին էլ կարող է հանկարծ մեղմանալ, դառնալ հեզ ու հնազանդ: Նա անսահման քնքուշ հոգի ունի, և դրա օրինակները բազմաթիվ են էպոսում: Օրինակ, էպոսի ամենահիասքանչ տեսարանում, երբ Դավիթը, Մըսրա Մելիքի դեմ կովի գնալուց առաջ, հրաժեշտ է տալիս համաքաղաքացիներին ու համազյուղացիներին՝ անսահման սիրո ու խանդաղատանքի խոսքեր ասելով նրանց:

Դավիթը միշտ էլ աչքի է ընկնում ուղղամտությամբ, անկեղծությամբ ու պարզությամբ: Ինչպես վերը նշվեց, Դավթի կերպարը մարմնավորում է հայ ժողովրդի բոլոր իդեալները:

Նա շատ մեծահոգի է: Մըսրա Մելիքի դեմ փայլուն հաղթանակ տանելուց հետո Դավիթը մեծահոգաբար ազատ է արձակում Սասնա դեմ ելած նրա զորքը, թույլ է տալիս, որ Իսմիլ խանումը գնա Մըսրը, իսկ ինքը Քեռի Թորոսի հետ վերադառնում է Սասուն:

Նա արդարամիտ է. երկրից հարուստ կողոպուտով հեռացած Խոլբաշու և Կոզբաղինի զորախմբի դեմ անհավասար ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո Դավիթը կանչում է սասունցիներին, հայտնում, թե ինչպես պետք է ավարը բաժանել. ամեն մարդ պետք է վերցնի միայն այն, ինչ նրանից խլել են, վերցնի միայն իր սեփականությունը:

Ժողովուրդն իր հերոսներին ներշնչել է այն մեծ իմաստությունը, որ մարդը պետք է լինի ճշմարտացի և միշտ հավատարիմ մնա իր տված խոսքին: Միերը գիտեր, որ իրեն աղետ է սպառնում, սակայն գնաց, քանի որ հավատարիմ էր իր տված խոսքին:

Ճշմարտություն. ահա այն հիմնական գիծը, որով ժողովուրդն օժտում է իր հերոսներին:

Էպոսի հերոսներն օժտված են բոլոր մեծ մարդկանց հատուկ արդարամտությամբ ու մեծահոգությամբ: Հիշենք, թե ինչպես Մեծ Միերը չի ուզում զինված գոտեմարտել առյուծի հետ: Նա դեն է նետում սուրը, և մարդ ու գազան հավասար գոտեմարտի են մտնում իրար հետ: Հիշենք, թե ինչպես Դավիթը նախ քնից արթնացնում է հակառակորդի բանակը և ապա նետվում մարտի: Դավիթը նույնքան արդարադատ է նաև գազանների նկատմամբ. գազաններին չի կարելի սպանել գազանանոցում, որովհետև նրանք գերիներ են, իսկ գերիներին չի կարելի կոտորել: Էպոսի հերոսների մեջ խոսող այս մեծահոգությունն ու արդարամտությունը դրսևորված են նրանց մղած թեժ ճակատամարտերի պահերին անգամ:

Հիշենք, թե ինչպես Սանասարն ու Բաղդասարն իրենք են տքնում

<sup>1</sup> Օրբելի Հ., Սասնա ծոեր, Երևան, 1961, Նախաբան:

(այդ հատկությունն ավանդում են նաև իրենց թոռ Դավթին), հսկայական ապառաժներ են կրում-բերում, որպեսզի նախ չքավորների համար տներ կառուցեն, ապա իրենց համար՝ ամրոց: Չնայած իրենց արիությանը, ժողովրդի բարօրության համար կատարած իրենց սխրագործություններին, հերոսներից ոչ մեկը, նվազագույն չափով անգամ, չի օգտվում իր ունեցած հնարավորություններից, չի ցուցաբերում փառասիրություն, չի ձգտում իր կամքով տնօրինել այն հողը, որի համար նա պատրաստ է տալ իր արյունը:

Արդարամտություն՝ մի կարևոր գիծ, որով օժտված են էպոսի հերոսները: Փոքր Մհերը մարտահրավեր է նետում Աստծուն, նա ուզում է վերջ տալ անարդարությանը: Նրա դեմ հրեշտակների շքախմբով կռվի են ելնում երկնային ուժերը: Մհերը սպառնում է, սակայն անկարող է խոցել: Այդ ժամանակ, որպեսզի իմանա՝ ի՞նքն է իրավացի, թե՞ Աստված, նա ինքն իր հետ պայման է կապում. եթե թրի հարվածին ժայռը չդիմանա, ուրեմն ինքն է իրավացի, իսկ եթե դիմանա, ուրեմն՝ իրավացի չէ: Ժայռը չի դիմանում թրի հարվածին, ձեղքվում է, և ոտքից գլուխ զինված Մհերը ձիով ներս է մտնում:

Փոքր Մհերը հոր մահվան դաժան վրիժառուն է՝ բնութագրված մի քանի գծերով: Սակայն նրա մոտ ցայտուն են ընդգծված սասունցի բոլոր հերոսներին հատուկ կողմերը: Նա էլ իր պապի՝ Մեծ Մհերի նման գետնի համար չափից դուրս ծանր է: Երբ քայլում է, ոտքերը խրվում են հողի մեջ: Փոքր Մհերի ոտքերն էլ հողի մեջ են թաղվում, որովհետև աշխարհը հոգնեցրել է դյուցազնին իր անարդարությամբ:

Ուշագրավ են նաև էպոսի կին կերպարները: Նրանք հայրենասեր են, անսահման նվիրված իրենց ամուսիններին, նրանք ունեն ուժեղ բնավորություն և իրենք են ընտրում իրենց ամուսիններին:

Այսպիսով, ելնելով պահպանված գրավոր վկայություններից՝ կարելի է պատկերացում կազմել այն բարոյական հատկանիշների մասին, որոնք հատուկ էին հայ մարդուն, որոնք գովերգվել և փառաբանվել են: Դրանք են՝ հայրենասիրությունը, անձնագոհությունը, տիրասիրությունը, չափավորությունը, արդարամտությունը, քաջությունը, պատվախնդրությունը, վեհանձնությունը, ընկերասիրությունը, ծնողասիրությունը, ընտանիքին նվիրվածությունը և այլն: Հակառակ այս ամենի, քննադատվել են տիրադավությունը, նենգությունը, հավատուրացությունը, գողությունը, երդմնազանցությունը, սուտ վկայությունը, հայհոյելը և այլն: